№ 2 ՓԵՏՐՎԱՐ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԱՏՆԻՉ ԲԱԽԱԼԵԱՆԻ ՍՊԱՆՈՒՄԸ

Բաղէշի տեղական Դաշնակցական Կոմիտէի որոշմամբ մահի դատապարտեցաւ Թանսի փաշայի աջ բազուկ մատնիչ Խաչիկ Բախալեանը։ Վճիռը գործադրեցաւ ամենայն յաջողութեամբ։ Բախալեանի գործունէութեան մասին ընթերցողը մասամբ գաղափար կը կազմի ներկայ համարում տպագրած մեր ընկերոջ յիշատակարանի մի հատուածից։ Հետեւեալ համարում կը տպագրենք դրա վերաբերեալ մանրամասն թղթակցութիւնը։

Փետրուար, 1895 թ.

Վերջին ժամանակներս համարեա բոլոր թերթերը, թէ հայ և թէ օտարազգի, թէ օրինական և թէ ոչ-օրինական լրքն են Տաճկահայաստանում կատարուած և կատարուող սարսափների նկարագրութեամբ։

Փաստերը պարզ կերպով ցոյց են տալիս, որ տաճիկ կառավարութիւնը քար ու քանդ է արել տասնեակ հայ գիւղեր, սրի, կրակի ճարակ է դարձրել հազարաւոր հայ արարածներ, որ տաճիկ զինուորները մի առանձին բաւականութեամբ կատարել են իրենց տէրերի հրամանը, պատառելով մայրերի որովայններ, այրելով կենդանի մարդկանց, զգուխի անցկացնելով հարսներին, որ քրդերը նիզակների ծայրերին են բարձրացրել մանուկներին, որ տաճիկ ամբոխը զանազան քաղաքներում յարձակւել է ահագին բազմութեամբ անզէն, անպաշտպան հայ ժողովրդի վրայ, սպանելով, վիրաւորելով հարիւրաւոր մարդիկ... Մի խօսքով մենք պարզ տեսնում ենք որ մահմեդական աշխարհը բարձրացել է հայերի դէմ։

Սակայն այս դէպքերի հետ միաժամանակ նոյն Տաճկաստանում տեղի են ունեցել և այլ բնաւորութիւն կրող իրողութիւններ, որոնք ներկայ պարագաներում իրենց իսկական նշանակութիւնը չեն ստանում մեր աչքում, որոնց վրայ մենք հարկաւոր ուշադրութիւնը չենք դարձնում, այնքան վրդովեցուցիչ են կատարուած գազանութիւնները, այնքան սաստիկ է այդ դժոխային պատկերների տպաւորութիւնը, այնքան խոր է զգացուած հասարակութիւնը սասունցիների և միւս „ապստամբ“ հայերի գլխին գործ դրած „կարգ վերականգնելու“, „խաղաղութիւն հաստատելու“ եղանակից։

Բայց այդ հարկաւոր է անել։ Հարկաւոր է սառը կերպով նայել իրականութեան վրայ, ուշադրութեամբ քննել այդ ըստ երևոյթին մանր-մունր, աննշան, բայց իսկապէս շատ մեծ նշանակութիւն ունեցող փաստերը։ Միմիայն այդ կերպով մենք կարող ենք ճանաչել աշխատաւոր ժողովրդի իսկական թշնամիներին, միայն այդ ժամանակ մենք կարող կը լինենք զանազանել ժողովրդի բուն, մշտական թշնամուն պատահական, ժամանակաւոր թշնամիներից։

Թողնելով անցեալը, յիշատակենք այստեղ մի քանի փաստեր, որոնք կատարւել են շատ մօտ ժամանակներս։

Սուլթանի կառավարութիւնը Սասունի կոտորածից յետոյ բանտարկում է իր գործակից, իր օգնական քիւրդ ցեղապետներին և միայն ահագին կաշառք առնելուց յետոյ ազատ թողնում։ Նորա սոված պաշտօնեաները յարձակւում են քիւրդ գիւղերի վրայ, բանտարկում բնակիչներին և կողոպտում նրա ամբողջ հարստութիւնը։ Քիւրդ կանայք և կոյս աղջիկներ բռնաբարւում են և մի քանիսը մեռնում են զինուորների անգթութիւններից։ Նոյն սուլթանի հրամանով թունաւորում են Սուրէյա փաշային, կախաղան բարձրացնում նրա վրէժառու որդոց և կնոջ եղբօրը։ Զինուորական և քաղաքային բժշկական դպրոցները ենթարկւում են խուզարկութեան և աշակերտները տասնեակներով բանտը թափւում.....

Այս փաստերը պարզ ցոյց են տալիս, որ մահմեդականութիւնը, քրիստոնէութիւնը կամ հայութիւնն այստեղ չնչին դեր են խաղում։ Եւ եթէ կոտորում, թալանում, կողոպտում են հայերին, դորա պատճառը նրանց հայ լինելը չէ, այլ այն, որ կարելի է նրանց անպատիժ կերպով թալանել և կոտորել։ Մենք տեսնում ենք, որ եթէ վեհափառ սուլթանը իր վսեմաշուք փաշաներով մի օր մահմեդականութեան դիմակի տակ կոտորել է տալիս իր շահերին քիչ թէ շատ վնասող քրիստոնեայ տարրին, մի րոպէ անգամ չի տատանւում մարդ մի նահանգ սրի, կրակի մատնելու, ամայի, աւերակ

գայլը չէ, որ դրանք գրաւում են նրա վիճակով, բայց [illegible] յուխտեան հասարակ անհրաժեշտ պայմաններ են, որովհետ-

դարձնելու, հաղարաւոր „հպատակներին“ սրի բերան տալու, մի ուրիշ օր, լրբաբար դէն ձգելով դիմակը, նոյն անգթութիւնները գործ է դնում իր օգնական, իր կրօնակից քրդերի դէմ, բանտարկում է մահմեդական կրօնի պատկանող ուսանողներին, թունաւորում է իր ուղղափառ փաշային, կախում նրա որդոց..., հենց որ կողոպտելու մի նոր պուխթ է ներկայանում, հենց որ միորևէ արգելք է նկատում իր սանձարձակ ընթացքի դէմ։

Ուրիշ կերպ էլ չի կարող լինել. սուլթանը և փաշաների, գայմագամների, փոլիսների, զապտիաների այդ ահագին լեգիոնը չեն կարող այլ կերպ իրենց գոյութիւնը պահպանել։ Նրանք պէտք է ծծեն խաղաղ ժողովրդի դառն աշխատանքը. Նրանք պէտք է ամեն մի պատեհ դէպքից օգուտին կողոպտելու ձեռքն ընկածին, ով ուզում է նա լինի՝ արհամարած գեավուրը, իր կրօնակից կիսավայրենի քիւրդը, թէ իր եղբայր տաճիկ գիւղացին։ Ուրիշ ի՞նչ կերպ այդ աւազակ փաշաները իրենց աւազակապետ սուլթանի հետ կարող են Բոսֆորի ափին պալատներ կառուցանել, պատել իրենց հարիւրաւոր հուրիներով, իրենց սանձարձակ անասնական կրքերին կատարեալ ազատութիւն տալ։

Զգո՞ւմ է արդեօք մահմեդական տարրը այդ իր վրայ ծանրացող լուծը, մտածո՞ւմ է արդեօք նա բռնակալ կառավարութեան արդարութեան կամ անարդարութեան վրայ, փորձե՞ր է անում արդեօք քիչ թէ շատ բարեփոխելու իր դառը վիճակը, մի որևէ ձգտում նկատո՞ւմ է նրա մէջ հետևելու արդէն յեղափոխական դրօշակը բարձրացրած հայ տարրին։

Դժբախտաբար շատ քիչ։

Մահմեդական տաճիկ ամբոխը դարերի ընթացքում վարժուած, ընտելացած խոնարհութեան ազնուականների և հոգևորականների ամուր ձեռի տակ, ապրած լինելով այդքան ժամանակ բռնակալութեան լծի տակ, համարում է այդ լուծը մի շատ բնական երևոյթ։ Դարերի ընթացքում մնալով տգէտ, մնահաւատ, քաղաքակիրթ աշխարհից անջատուած, նա չէ կարողացել դեռ ևս դուրս գալ մօլլաների ազդեցութեան տակից, չէ դադարել դեռևս սուլթանին համարել Աստուծոյ ներկայացուցիչ երկրիս վրայ և աղաներին իրենց „օրինաւոր“ պետեր։

Ահա թէ ինչու նա դեռևս չի զգում իրերի անբնական լինելը, ինչու նա դեռ փորձ չի փորձում ազատուել իրեն ճնշող արիւնարբու բռնակալ իշխանութիւնից;

Եւ ոչ թէ միայն ամբոխն այդպէս չէ վարւում, այլ և իր տգիտութեան շնորհիւ զէնք է դառել այդ բռնակալութեան ձեռքին, պատրաստ լինելով իւրաքանչիւր

բոպէ յարձակուել „ապստամբ հայերի„ վրայ և նրանց անխնայ կոտորել, երևակայելով, որ իւր շահերն է պաշտպանում։ Միամիտ անբոխ, նա դեռ իրեն կարծում է այն հին, երանելի ժամանակներում, երբ իսկապէս տէր էր երկրին, երբ նա կարող էր ազատ համարձակ շահագործել „հպատակ գեավուրներին“։ Նա չի նկատում, որ պատմական հոսանքը զատել է իրանից ազնուական դասը, ոյժ, զօրութիւն է տուել հոգևորականներին. նա դեռ չի զգում, թէ մինչև ինչ աստիճանի է կախուած իր ցաւալի վիճակը այդ դասերի տիրապետութիւնից։ Նա չի հասկանում, որ տնտեսական զարգացման զօրեղ ոյժը աւելի և աւելի է նսեմացնում նախկին անհաւասարութիւնը քրիստոնեայ և մահմեդական ազգաբնակութեանց մէջ, որ հենց այդ ոյժը մի քանի ժամանակից յետոյ զրոյի կը դարձնի այդ անհաւասարութիւնը։ Վաղեմի յիշողութիւնների տպաւորութեան տակ նա անուշադիր է թողնում իւր ներկայ գլխաւոր թշնամուն և իւր ոյժը գործ է դնում այն տարրի դէմ, որը բոլորովին պատասխան չէ նրան և որի ներկայ դրութիւնից նա այդքան չնչին առաւելութիւններ ունի..

Քիւրդ տարրը համեմատաբար քիչ է շփւում սուլթանի բռնակալութեան հետ։ Բայց մենք տեսնում ենք այսօր, ինչպէս սուլթանի կառավարութիւնը իւր ճանկերը մեկնում է դէպի նրանց և շոյելով ցեղապետներին, իւր ցանցերի մէջ է փաթաթում ամբողջ ժողովուրդը։ Բացի այդ՝ կիսավայրենի անասնապահ քիւրդ տարրը թող լաւ հասկանայ, որ իւր գինուորական ուժի, սուլթանից ստացած մարթինի հրացանների դէմ կայ մի աւելի զօրեղ զէնք, դա տնտեսական ոյժն է, որն իրեն պակասում է։ Եթէ նա ցանկանում է շարունակել ապագայում ևս իւր կեանքը, եթէ նա չէ ցանկանում պարտութիւն կրել գոյութեան կռիւ ասպարէզում, եթէ նա չէ ցանկանում ջնջուել, վերանալ մարդկութեան շարքից, նա պէտք է թողնի իր ներկայ կիսաաւազակային կեանքը, պէտք է դիմի խաղաղ պարապմունքների և հաշտ ապրի հարևան ազգերի հետ։

Ամենքին էլ յայտնի է, որ այն թշնամական դրութիւնը, որ այսօր նկատում ենք հայ և մահմեդական տարրերի մէջ, սկզբներում, նախ քան յեղափոխութեան սուր կերպարանք ստանալը, այնքան զօրեղ չէր, որքան այժմ է։ Յայտնի է նոյնպէս սուլթանի կառավարութեան գործոն դերը այս թշնամութիւնը սաստկացնելու և ծարածելու գործում շէյխերի, մօլլաների և այլ միջոցներով։ Բայց ի՞նչ արին դրա դէմ հայ յեղափոխականները։

Պէտք է խոստովանուած, որ մեր 80-ական թուականների յեղափոխական քարոզիչները դրական հողի վրայ էին կանգնած. նրանք մտնում էին մահմեդական-

ների, գլխաւորապէս քրդերի մէջ, հասկացնում իրերի դրութիւնը և նրանց հետ միասին աշխատում պաստամբութիւն առաջ բերել սուլթանական կառավարութեան դէմ։ Սակայն 90-ական թուականներին, երբ կրքերը չափազանց յուզած էին Կարինի կոտորածի առթիւ, երբ հայ երիտասարդների մի մասի մէջ տիրապետում էր վրէժխնդրական ոգին, որ շատ բնական էր այդ բոպէին, քրդերի և տաճիկների մի քանի սպանութիւնները բորբոքեցին արդէն գոյութիւն ունեցող թշնամութիւնը և մեր դէմ հանեցին ամբողջ քիւրդ ցեղեր, որոնք շղթայի նման բռնել են ռուս-տաճկական և պարսկա-տաճկական սահմանագծի գլխաւոր մասը։ Այնուհետև դժուարանում է մարդկանց և զէնքերի տեղափոխութիւնը, զինակիր խմբերը կորստաբեր ընդհարումներ են ունենում քրդերի հետ և այն մարտական խմբերը, որոնք կազմակերպած էին յատկապէս սուլթանի կառավարութեան դէմ կռուելու համար և պաշտպանելու երկրի խաղաղ ու կեղեքուող տարրը յարձակումներից, թալանից և այլն, կոտորեցան քրդերի ձեռքով (ալաշկերտցի ծերունի Ցարութիւն աղայի խումբը, Արաբօյի խումբը և այլն)։ Իսկ Սասունի գործում քրդերի թշնամական վերաբերումը հասաւ իր գագաթնակէտին։ Աւելի ցաւալին այն է, որ սասունցոց դէմ էին եղել այնպիսի ցեղեր, որոնք մի ժամանակ եղբօր պէս էին ապրելիս եղել նրանց հետ, բայց որոնք թշնամացել են մասամբ սուլթանի կառավարութեան դրդմամբ և մասամբ էլ հայ յեղափոխականների անտակտ, անխոհեմ ընթացքի պատճառով։

Այս դառը դասերից, այս սարսափելի կոտորածներից յետոյ, կը դարձնե՞նք արդեօք հարկաւոր ուշադրութիւնը օտարազգի տարրերի ընդդիմադրական սարսափելի ուժի վրայ։ Քրդերը գրգռուած են այժմ, կարդում ենք մեր ընկերոջ յիշատակարանում. սպասե՞նք, որ գարնան հայերի գլխին դառնայ այդ գրգռումը, որ նորից սկսեն իրենց աւերումները, և եթէ հայերի կողմից մի նոր շարժում լինի կառավարութեան դէմ, դարձեալ գործիք դառնան նրա ձեռքին։ Տրապիզոնում տաճիկ ամբոխը,— այն ամբոխը, որը մի քանի տարի առաջ միայն ձեռք ձեռքի տուած հայ և յոյն ազգաբնակութեան հետ, կռուում էր փթած, նեխած կառավարութեան անբարոյական ներկայացուցիչների դէմ,— այսօր պատրաստութիւն է տեսնում հայերի կոտորածը առաջ բերելու. նոյնը և ուրիշ քաղաքներում. սպասե՞նք, որ այդ էլ իրագործուի, հազարաւոր զոհեր նորից ընկնեն ի մեծ ուրախութիւն արիւնարբու սուլթանի...

Ժամանակ է հարցին աւելի լուրջ կերպով նայելու, դէն ձգելով զանազան թեթու, անմիտ գաղափարներ։ Համարելով մեր գլխաւոր, արմատական թշնամին սուլթանի կառավարութիւնը, կենտրոնացնենք նրա դէմ մեր գլխաւոր ուժերը և աշխատենք ամեն կերպ ոչ թէ գրգռել օտարազգի ազգաբնակութիւնը, ոչ թէ առանց այն էլ գոյութիւն ունեցող անհագին թշնամական յարաբերութիւնը զօրացնել աւելի ևս, այլ հասկացնենք նրանց թէ գործով և թէ խօսքով մեր նպատակը, բացատրենք իրենց իսկական շահերը, որ հենց իրենք կազմեն իրենց՝ կառավարութեան դէմ մի զօրեղ մարմին, որ իրենք էլ ձեռք մեկնեն մեզ մեր անհաւասար կռուի մէջ։

Մենք մեզ չենք խաբում։ Մենք շատ լաւ ենք ճանաչում մեր դիմացի բոլոր խոչընդոտները։ Մենք շատ լաւ գիտենք, որ մեր դէմ ունենք մահմեդական ամբոխի տգիտութիւնը, ժողովրդութիւնը, դարևոր ատելութիւնը, որ մեր նպատակին կը խանգարեն մահմեդական տարրի մի քանի քաղաքական արտօնութիւնների բեկորները, որ դժուար է հաշտեցնել լեռնաբնակ անամնապահ տարրը երկրագործի հետ...

Այս բոլորն ի նկատի ունենալով հանդերձ մենք դարձեալ յոյս ունենք։ Յոյս ունենք, որովհետև տեսնում ենք, որ մահմեդական աշխարհը, անկարող լինելով անջատուած մնալ, ի մեծ դժգոհութիւն իւր հոգևորական և ազնուական դասի, ստիպուած է շփուել քաղաքակիրթ ազգերի հետ, ենթարկուել նրանց ազդեցութեան, որովհետև համոզուած ենք, որ կեանքի նոր պահանջները կը պատռեն վերջապէս մի օր այն անշարժութեան, մեռելութեան պատեանը, որի մէջ փակուած է մնացել հարիւրաւոր տարիներ մահմեդական տարրը, որ դէն կը ձգեն այն կրօնական կեղևը, որի մէջ հոգևորական դասն աշխատում է պահել ժողովրդի ոգին, արգելելով նրան ազատ շունչ քաշել։ Յոյս ունենք, որովհետև արդէն տեսնում ենք տաճիկ ժողովրդի զարգացած մասի մէջ մխիթարական երևոյթներ։

Յարաբերութիւնների այս լարուած դրութեան մէջ մենք տեսնում ենք, որ Բաղէշում հայերը և տաճիկները միացած գաղտնի ժողով են կազմում փաշայի դէմ։ Մենք պատահում ենք պալատական բարձր շրջաններում Ղազի Օսման փաշայի նման լուսամիտ մարդու, Սուրէյա փաշային, որը զոհ է գնում իւր գաղափարների և համարձակ խօսքերի պատճառաւ։ Սուրէյա փաշայի որդոց և նրանց մօրեղբօրը կախաղան բարձրանալիս այդ ազնիւ մարդու մահուան արդար վրէժը լուծելու փորձի համար։ Իսկ աւելի մխիթարական է յեղափոխութեան գաղափարի տարածիլը տաճիկ երիտասարդութեան մէջ։ „Երիտասարդ Թիւրքիայ“ ազատամիտ կուսակցութեան գոյութիւնն արդէն յայտնի է։ Զինուորական և քաղաքային բժշկական դպրոցների աշակերտների մէջ եղած խուզարկութիւնները և դրանց-

դասը չէ, որ դրա՞ զբաղուում են նրա վիճակով, բայց յուսալեան համար անհրաժեշտ պայմաններ են, որովհե-

ջորդած զինուորական դպրոցի ուսանողների ձերբակալութիւնները սոսկալի բարոյական հարուած է սուլթանի կառավարութեան։ Ի սրտէ շնորհաւորում ենք տաճիկ երիտասարդութեան այդ քայլը յեղափոխութեան փշոտ ուղիի վրայ։ Հաւատացած ենք, որ այդ ձերբակալութիւնները, բանտերի սոսկումները աւելի զարկ կը տան սկսուած շարժման և առաջին քայլին կը հետևին երկրորդը, երրորդը...

Ներկայ րոպէում թոյլ է, շատ է թոյլ մահմեդական տարրի սուլթանի դէմ ուղղած ընդդիմադրական ոյժը, դեռ նոր է սկսում ծագել յեղափոխական գաղափարը տաճիկ երիտասարդութեան մէջ, դեռ այդ գաղափարը չի կարողացել որոշ գոյն ստանալ, այդ մենք խոստովանւում ենք։ Բայց որովհետև նոր է սկսւում, որովհետև շատ է թոյլ, ձեռք մեկնենք նրան, աշխատենք, որ ընկած կայծը բորբոքւի, դառնայ սոսկալի հրդեհ, որը կը վառի սուլթանի կառավարութեան բոլոր հիմքերը, իսպառ կոչնչացնի այդ նեխւած դիակից առաջացած ամեն տեսակ միազմները և առաջ կը բերի Տաճկաստանում ապրող ժողովրդների վերածնութիւնը։

(ՄԵՐ ԸՆԿԵՐՈՋ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

ԲՈՒՆԻ ՀԱՆՐԱԳԻՐ ԲԱՂԷՇՈՒՄ

Նախ քան Վանի անգլիական հիւպատոսի օգնականի Բաղէշ գալը, Բաղէշի կուսակալը պատրաստում է ինքը մի մազմաթա, որ իբր թէ հայերի (մանաւանդ Բաղէշի հայերի) խնդրանօք ինքը՝ կուսակալը գնաց Սասուն, ամեն ինչ կարգի գցեց և վերադարձաւ. իբր հայերը յայտնել են փաշային, թէ իրենք լսել են և հաւատացած են, որ Սասունում հայ աւազակներ կան, որոնք մեծ վնասներ են հասցնում երկրին. իբր իրենք՝ այդ խելօք հայերը չեն կամենում, որ իրենց աւազակ եղբայրների շնորհիւ արատաւորւած լինի վսեմաշուք սուլթանի աչքին իրենց անարատ պատիւը և այդ պատճառով խնդրում են „նորին բարձրապատիւ“ կուսակալից պատժել խստօրէն Սասունում և այլ տեղ գլխնուող հայ աւազակներին։

Կուսակալ փաշան այդ մազմաթան կազմելուց յետոյ ստիպում է Բաղէշի իշխաններին, որ ստորագրեն։ Ամենից առաջ ստորագրում է մի կեղտոտ հայ պաշտօնեայ Բախալեան ազգանունով։ Յետոյ տանում են ստորագրել տալու նախ Աւետիս էֆ. և յետոյ այլոց։ Աւետիս էֆ., երբ կարդում է այդ խայտառակ մազմաթէն, կատաղում է և անարգելով դուրս է անում այդ վարձկան հային իր տնից։

„Անիծած շուն, ասում է նա, երբ ենք մենք խնդրել, որ նա գնայ Սասունը քար ու քանդ անի, ե՞րբ և ո՞վ է սասունցոց աւազակ համարել, ե՞րբ են նրանք աւազակութիւն արել. ինչպէս որ ինքը բանտի մէջ տանջանքներով մահացրեց տասնեակ հայեր, ինչպէս որ անմեղ տեղը կախել տւեց Վարդենիսցի Մարգար վարժապետին, այնպէս էլ ինքն իր կամքով կոտորել տւեց սասունցիներին։ Ո՞վ է նրան բան խնդրել։

„Ես 80 տարեկան եմ, աւելացնում է նա, ոտս գերեզմանումն է, մահից էլ չեմ վախենում։ Երբ այսօր հազարաւոր հայեր սրի ճարակ են եղել, երբ հարազատ եղբայրս Աքիայում փտում է բանտի մէջ, ես այդպիսի մի սուտ շարադրած, լիրբ մազմաթայի ստորագրե՞մ։

Աւետիս էֆ. այս համարձակ խօսքերը միւս իշխանների և հասարակ ժողովրդի ականջին հասնելով, սաստիկ տպաւորութիւն են գործում։ Ոչ ոք չի համաձայնւում ստորագրել։ Այդ ժամանակ մազմաթէն կուսակալը ուղարկում է Ախլաթ, պատւիրելով տեղական ղայմաղամին, որ ստիպմամբ ստորագրութիւններ հաւաքի տեղական հայերից։ Ղայմաղամը կանչում է բոլոր ռէսներին և ստիպում է ստորագրել։ Նոքա, իմանալով բանի էութիւնը, մերժում են ասելով, թէ ինչ նշանակութիւն կարող է ունենալ մեզ նման խեղճ արարածների ստորագրութիւնը Սուլթանի մօտ. մեզնից մեծերը կան, թող ստորագրեն, մենք էլ պատրաստ ենք։ Ղայմաղամը դիմում է այնուհետ Ախլաթ գաւառի առաջնորդին։ Սա էլ է մերժում, պատճառաբանելով, թէ իրենք կապւած են քաղաքի հետ. եթէ քաղաքը չի ստորագրել, իրենք էլ չեն կարող ստորագրել։

Կատղած ղայմաղամը բանտարկել է տալիս իսկոյն թէ վարդապետը և թէ 22 հասակաւոր հայեր, իբր խռովարարներ։ Բանտում վարդապետին ենթարկելով խիստ տանջանքների, ստիպում են ստորագրել. վարդապետը տանջանքներից ազատւելու համար ստիպւած ստորագրում է։ Նրան հետևում են և բանտարկւած ռէսները ու միւս հայերը, որից յետոյ բոլորն էլ ազատւում են։

Ախլաթում չկայ ոչ կանոնաւոր դատարան, ոչ էլ հեռագրատուն, որպէս զի եղելութեան մասին կարելի լինի իմաց տալ, ուր հարկն է։ Ղայմաղամն իր ոստիկաններով ինչ ուզենան, այնպէս էլ կանեն. իրենք են համարեա երկրի տէրը։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԸ

Վանի անգլիական հիւպատոսը մի հայ թարգմանի հետ եկաւ Բաղէշ, որ այնտեղից անցնի Սասուն տեղական դրութեան հետ ծանօթանալու համար։ Բայց փաշան շատ լաւ զգալով, որ այդ իրեն ամենևին ձեռնտու չէ, արգելեց այդ ճանապարհորդութիւնը։ Հիւպատոսն ստիպւած էր Բաղէշ մնալու մի միսիոնների տանը և այնտեղ տեղեկութիւններ հաւաքել Սասունի մասին։ Տեղեկութիւններ հաւաքում էր թէ Սասունի մի քանի փախստականներից և թէ այն զինուորներից, որոնք կռուել են Սասունցիների դէմ և որոնք վիրաւոր պարկած են հիւանդանոցում։ Այս վերջիններից տեղեկութիւններ հաւաքում էր մի ամերիկացի բժշկի միջոցով։

Բաղէշի հայերին խստիւ արգելւած էր գնալ հիւպատոսի մօտ։ Նրա տան շուրջը գիշեր ցերեկ լիքն էր հայ և թուրք լրտեսներով, փոլիսներով ու զապտիաներով։

ԺՈՂՈՎ ՓԱՐԱՑԻ ԴԷՄ

Կուսակալի կամայականութիւնը հետզհետէ անտանելի է դառնում։ Համբերութիւնը հատած, Բաղէշի հայ իշխանները մի օր ժողով են գումարում, հրաւիրելով նոյնպէս իրենց ծանօթ երկու տաճիկ վաճառականներին, որոնք նոյնպէս զզուած են հնում Սուլթանի կառավարիչ փաշայից։ Հրաւիրում են նաև հիւպատոսի թարգմանին։ Ժողովը կայանում է գիշերով Աւետիս էֆ. տանը։ Ժողովի նպատակն է լինում խստիւ բողոքել սուլթանի փաշայի բոլոր անզգամութիւնների դէմ։

Կուսակալը լսում է թէ չէ ժողովի մասին, իսկոյն ամբողջ ոստիկանութիւնը ոտի է կանգնեցնում։ Տունը շրջապատում են և միջի մարդկանց՝ թէ հայերին, թէ տաճիկներին և թէ թարգմանին, բոլորին էլ ձերբակալում և բանտը թափում։ Թարգմանը ազատւում է բանտարկութեան միւս օրը։ Հայերը և տաճիկները ամբողջ երեք օր հեռագիր հեռագրի յետևից են ուղարկում Պոլիս Բ. Դրան իրենց ցաւերը յայտնելու համար։ Վերջ ի վերջոյ ազատւում են տաճիկները, իսկ հայերը Աւետիս էֆ. հետ միասին տանւում են Տարղալոց (միջնաբերդի բանտը)։

———o———

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

Տիգրան փաշա Փեշտմալճեանի մահը.

Գազան սուլթան Համիդը, 19-րդ դարու այդ արիւնարբու ճիւաղը, այդ մարդասպան 19-րդ դարու Ատիլլան այդ մարդկային արիւնի մէջ լողացող նոր Լէկլեմուրը, Սիւրէյա փաշան թունաւորելէն ետքը թունաւորեց Սիւրէյա փաշայի սիրական, ընտանիքի բժիշկ Տիգրան փաշային։

Իր սուրէն կասկածող, դան ձայնէն սարսափող, հողմէն դողացող, պատուհաններու ապակիներէն խելակորոյս սուլթան Համիդը կասկածեր է, թէ միգուցէ Սիւրէյա փաշան որևէ գաղտնիք հաղորդած ըլլայ իր սիրական բժշկին, որը կոչուած էր փաշայի քով անակնկալ հիւանդութիւնը դարմանելու համար և գտած էր, որ փաշան թունաւորուած է և այլ ևս որևէ դարման չօգներ, չօգներ որովհետև 1-2 ժամէն այլևս հոգին կը փչէ. բժշկի այս յայտնութիւնը սարսափահար ըրաւ Սիւրէյա փաշայի ընտանիքը և զաւակները։ Բժշկի որոշած ժամանակէն աւելի կանուխ մեռաւ ազնիւ, լուսամիտ, խելացի քաղաքագէտ Սիւրէյա փաշան, ինչպէս ամեն օր, ամեն ժամ կը մեռնին այն ամեն լուսամիտ, առաջադէմ և ազատամիտ սակաւաթիւ թուրքերը և իրենց հետևողները։ Արիւնածարաւ Համիդի լրտեսները իմացան, որ Տիգրան փաշան յայտնած է եղեր Սիւրէյա փաշայի թունաւորումը, որը լսելով, փրփրած հրամայեց անմիջապէս Սիւրէյա փաշայի մօտ ուղարկել իր սիրական Տիգրան փաշան։ Հրաւէրքի մը ժամանակ կը թունաւորի Տիգրան փաշան և նոյն գիշերը ազնիւ, մարդասէր, աշխատասէր հայ բժիշկը կը կնքէ իր մահկանացուն ի մեծ ուրախութիւն չար սուլթանի և ի մեծ ցաւ այն բազմաթիւ ադքատ ընտանիքներու, որոնց ոչ միայն հայր եղած էր տասնեակ տարիներով, ոչ միայն ձրի բժշկած էր, այլ և շատ անգամներ ձրի դեղեր տուած էր և շատ անգամներ ալ նոյն իսկ հիւանդներու անունդը հոգացած էր։

Զինուորական և քաղաքային բժշկական դպրոցներու խուզարկութիւնը։

Անգամ մը գրած էր արդէն, որ Պոլսի բոլոր միջնակարգ և բարձրագոյն դպրոցներու աշակերտները կը գտնուին ամենախիստ հսկողութեան ներքև և աշակերտներու ամենապզտիկ քայլը, շարժումները, նոյն իսկ մը տածումները, խօսակցութիւնները, ընթերցանութիւնները կը լրտեսուին լրտես ուսուցիչներէ, լրտես աշակերտներէ, լրտես դռնապաններէ։ Այս լրտեսներէ զատ կառավարութենէն ամեն դպրոցի մէջ արդէն բարձր պաշտօնեայ մը նշանակուած է, որու պաշտօնը պարզապէս ուսուցիչներն ու աշակերտները լրտեսելու մէջն է։ Այս լրտեսապետը, հարկաւ, ամենայն օր լրտես ուսուցիչներէն, աշակերտներէն և դռնապաններէն դպրոցի մէջ տեղի ունեցած ամենաանշան դէպքը ամենայն մանրամասնութեամբ կիմանայ։

Ամսոյս 14-ին, միաժամանակ կը կողպուին զինուորական և քաղաքային բժշկական վարժարաններու բոլոր դասարաններու դռները աշակերտներու վրայ։ Դռնապաններուն ամենախիստ հրամաններ կը տրուի ոչ մարդ ընդունել դուրսէն և ոչ ներսէն մարդ դուրս թողուլ։ Ոստիկանութեան պաշտօնեայ մը, լրտեսապետը և դպրոցի տեսուչը միասին կը բանան դասարաններու դուռները և մէկիկ մէկիկ կսկսին աշակերտներու գրքերը, պահարանները... ամենախիստ խուզարկութեան ենթարկել։ Խուզարկութիւնը մինչև երեկոն կը տևէ։ Խուզարկութիւնէն ետքը կսկսին հարցաքննութիւնները աշակերտներու մէջ տեղի ունեցած գումարումներու, խօսակցութիւններու, ընթերցանութիւններու և տեսակցութիւններու մասին։ Քաղաքային բժշկական վարժարանէն ոչ մէկ հոգի չի ձերբակալուեր, իսկ զինուորական վարժարանէն շատերը կը ձերբակալուին։ Ձերբակալածներու տուները ևս կը խուզարկուին։ Ձերբակալածները 23 հոգի են։ Ցարդ ստոյգ տեղեկութիւն չունին ձերբակալածներու մասին նոյն իսկ ձերբակալածներու ծնողները, որովհետև որևէ յարաբերութիւն արգելեալ է բանտարկեալներու հետ. իսկ շատ ծնողներ մինչև իսկ կը վախնան իրենց զաւակներու վիճակով հետաքրքրուիլ և դիմումներ ընել։ Կը կարծուի, որ ոմանք Մարմարայի ալիքներու մէջ հանգիստ գտած են, իսկ միւսները աքսորուած հեռու աքսորավայրեր առանց որևէ դատավարութեան և դատապարտութեան։

Սուրէյա փաշայի երկու տղոց և իրենց մօրեղբօր մահը։

Սուրէյա փաշայի երկու մանչերը և իրենց մօրեղբայրը կերդուին իրենց հօր մահուան վրէժը լուծել արիւնարուշտ, մարդակեր Սուլթան Համիդէն։ Այս երեք յանդուգն և վառվռուն երիտասարդները փոխանակ ջանալու իրենց շուրջը ժողովելու սուլթան Համիդի բռնապետութենէն դժգոհները, փոխանակ ջանալու Պոլսի մէջ հիմնելու զօրեղ ընդդիմադրական ոյժ մը, փոխանակ առաջ բերելու մի զօրեղ յեղափոխական

գասը չէ, որ դրանք կբաղադրուին նրա-վիճակով, բայց [illegible] յուլիսեան հատար անհրաժեշտ պայմանները են, որովհետ-

կազմակերպութիւն և ամբողջ Թիւրքիան ծածկելու յեղափոխական կազմակերպութիւններու ցանցով, կը ձըգեն այս պմենաուղիղ ճամբան, վառուած աւելի անձնական և վրէժխնդրական հոգով, քան թէ ոգևորուած ընդհանուր վրէժխնդրութեամբ, ընդհանուր հայրենեաց բարօրութեամբ, կը մոռնան ընդհանուրը, կը մոռնան ժողովուրդը, ամբողջ Թիւրքիան և երիտասարդական բորբոքուած սրտով կուզեն միայն իրենց հօրը վրէժը լուծել և զոհ կերթան բոլորովին անշահ կերպով, ինչպէս որ զոհ գնացին ուրիշները ասկէ 4-5 ամիս առաջ։

Սիւրէյա փաշայի 2 որդին և Սիւրէյա փաշայի կնոջ եղբայրը միաբանելով բերել կուտան ուժանակ և կը մտադրին սուլթան Համիդը իր Եըլդզի պալատով օդը հանելու։ Անտարակոյս այս ձեռնարկը ամենադժուար և ամենայանդուգն ձեռնարկն էր, մանաւանդ որ ամառուայ նոյն տեսակ փորձը ի նկատի ունենալով՝ սուլթան Համիդի հրամանով պալատի շրջակայքը միշտ ամենախիստ, ամենաարթուն հսկողութեան տակ էր։ Ամենաթեթև կասկած ունեցած ժամանակը, ով կուզէ ըլլար, թէկուզ ամենաբարձր, ամենավստահելի պաշտօնեայ կամ պալատական, իսկոյն կը ձերբակալուի և ամենամանրազնին խուզարկութեան կենթարկուի և ամենամանրամասն հարցաքննութեան։ Անհաւատարմութեան ամենաանշան, դոյզն նշան եթէ նկատուի մէկու վրայ, ալ փրկութիւն, ազատում չկայ։ Առաջին դէպքէն մինչև այժմ բազմաթիւ անձեր խուզարկութեան և հարցաքննութեան ենթարկուեր են և շատերն ալ հեռաւոր աքսորավայրեր կապաշխարեն և կաղօթեն սուլթան Համիդի արևշատութեան համար, որ վերհափառ սուլթանի շնորհիւ աքսորավայրի մէջ արև կը տեսնեն և կապրեն։

Սիւրէյա փաշայի որդիքը և միւսը մութ գիշեր մը կերթան պալատի շուրջը իրենց մտադրածը կատարելու, իրենց հօր վրէժը լուծելու, սուլթան Համիդը իր Եըլդզի պալատով օդը պայթեցնելու համար։ Մութ, խաւար գիշերը չի փրկեր դաւադիրները լրտեսներու ճանկէն, որոնց թիւը, յատուկ մութ գիշերուայ պատճառով նախատեսած և բազմապատկած է եղեր։ Դաւադիրները կը նկատուին, բայց իրենք ոչինչ չեն նկատեր և առաջ կերթան, մինչև որ յանկարծ, անսպասելի կերպով յարձակում կը կրեն և ձերբակալուած պալատ կը տարուին։ Վրան գլուխը խուզարկած ատեն կը գտնուին ուժանակ ու զէնքեր։

Միւս օրը եղելութիւնը իմաց կը տրուի գազան Համիդին, որը անմիջապէս կը հրամայէ իր պատուհանի առջև երեք կախաղան կանգնել և երեքին ալ իր աչքի առջև կախել։ Բռնաւորի բարձր հրամանը անմիջապէս և ամենայն սրբութեամբ կը կատարուի։ Սիւրէյա փաշայի մանչը և կնոջ եղբայրը Սուլթանի աչքի առջև կը կախուին։

Ուրիշ պալատական մը, որու ով ըլլալը ցարդ անյայտ մնաց, պալատի մէջ անցեալները կը բրդուի։

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Թող չկարծուի, թէ Տրապիզոնի նահանգի հայերն ալ շնորհիւ արիւնարբու սուլթանի խաղաղ ու անդորր վիճակի մը մէջ ապրելու բացառիկ բաղդն ունի։ Ահաւասիկ համառօտ տեղեկագիրը պատահած զանազան դէպքերու, որմէ հետևութիւն հանել ընթերցողաց կը թողում։

1894 թ. դեկտեմբ. 29-ին հինգշաբթի օր Տրապիզոնի պատժական դատարանը հետևեալ վճիռը տուաւ Սամսունէն բերուած 17 հայ բանտարկեալներու մասին, որոնք 6 ամիս Սամսուն և 6 ամիս էլ Տրապիզոնի բանտը կը հեծէին, իբր յեղափոխական. տասներկու բանտարկեալներ բոլորովին անմեղ տեսնուելով, ազատ արձակուեցան, իսկ մնացեալ հինգը դատապարտուեցան այսպէս.

Ատովմ Ասլանեան՝ 28 տարեկան, դերձակ, Սեբաստացի, 15 տարուայ բանտարկելութեան. Գիսենդ Գալստեան՝ 26 տար. գրագիր, տրապիզոնցի, 10 տարուայ. Գէորգ Վարդիկեան՝ 23 տար., գրագիր, խարբերդցի, 10 տարուայ. Աւետիս Թերզիպաշեան՝ 27 տար., դերձակ, չարշամպացի, 5 տարուայ. Կարապետ Պախրճեան՝ 23 տար., դերձակ, չարշամպացի, 5 տարուայ։

Ազատ արձակուածներու մէջ մէկը կար, որ հարսանեաց առագաստի գիշերը ձերբակալեր և Տրապիզոն փոխադրած էին։ Խեղճ մարդիկը 12 ամիսներ բանտին մէջ տանջելէն վերջը, „բարեխնամ“ կառավարութիւնը հոգ չբրաւ զանոնք ձերբակալած տեղերն իսկ ղրկելու և եթէ քաղաքիս հայերը չը հոգային անոնց ճանապարհածախսը, բատիշահի շնորհին արժանացողները ո՞վ գիտէ քանի ամիսներ ևս աստ անդ պիտի դեգերէին։

Նոր տարիի օրը յիշեալ 12 անձինք մեկնեցան Սամսուն։ Գալով դատապարտուածներուն՝ դեռ յայտնի չէ, թէ ուր որոշեր է անոնց աքսորավայր։ Կատարուած դատավարութիւնը հետաքրքրական և ուշադրութեան արժանի հանգամանք ունենալով, մօտ ժամանակէն առանձին կը տեղեկագրեմ։

Սամսունի մէջ դեռ բանտարկուած կը մնան 16-17 հայեր, որոնց 2-ը քահանայ. և ամենն ալ զոհ են Զարշամպայի, Իւնեայի և Սամսունի կառավարիչներու գազանութեան ու կաշառակերութեան։

Քահանաներէն մին՝ Տ. Թադուլ Կարմրեան, Զարշամպայի Մարթել գիւղէն, երիտասարդ, հուժկու անձ մը և ամբաստանուած „իբր անդամ յեղափոխական ընկերութեան մը, գիւղացւոց մէջ մարթինի հրացան, թորփետոյ և այլն զէնքեր բաժանող“ (թուրք պաշտօնեաները թորփետայ անուն մը լսեր են և ուր որ խուզարկութեան մը ելնեն թորփետոյ կըսեն, կըփընտռեն. բայց ծիծաղելին այն է, որ իրենք ալ չեն գիտեր, թէ այդ բանը սատանայ է թէ մի սոսկալի բան)։ Մատնագիրը ստորագրած են Սողոմոն Փափագեան և Ավճեօղլու Հասան անուն թուրք մը. որոնք դեռ ուրիշ շատ մը գործերու մէջ շատ աաեն ամենաստոր գործիք եղած են Զարշամպայի գայմագամ Զէրքէզ Մուսա փաշային չարագործութեանց։

Մուսա փաշան, ուրիշ բազմաթիւ թուրք փաշանե-

բու պէս աւազակութեամբ կապրէր լեռներու մէջ 5-10 տարի առաջ և ի վարձատրութիւն իւր այս հաւատարմական ծառայութեան արժանի դատուեցաւ աւելի կատարելագործեալ աւազակային կազմակերպութեան մը (Օսմ. կառավարութեան) գործոն անդամը լինելու, որով և Զարշամպայի գայմագամ ու փաշայ անուններու։ Ցիշեալ երկու անձերից զատ ունի նա և շատ գաղտնի ու յայտնի գործակալներ, որոնց միջոցաւ կողոպուտ, զբաղարտութիւնք, մարդասպանութիւն աներկիւղ գործել կուտայ, լցնելու իր անկուշտ որկորը ու շռայլութեանց զեղխութեանց գոհացում տալու։ ուստի զարմանալի չէ անիրաւ անթիւ բանտարկութեանց և մարդասպանութեանց օրստօրէ շատանալը։

Մէկ շատ աւազակներ, ցածորդներ սուրբի պէս անպարտ կելնան Մուսա փաշայի դատարանէն, բայց վերջերս ժողովուրդը այնքան նեղուեցաւ սոյն աւազակ գայմագամէն, որ նոյն իսկ Թուրք, յոյն, հերքեզ հասարակութիւններն ալ սկսան անդադար բողոքել անոր դէմ, ներկայացնելով զայն ամենառաջին աւազակ, անխիղճ կաշառակեր և անդորրութեան թշնամի գազանմը. նահանգի կուսակալ Փադրի պէյը, որ առանձին համակրանք կը տածէ այս իր յաջողակ գործակցին, բնաւ կարևորութիւն չտար ժողովրդի արդար բողոքի ձայնին։ Բողոքողներ ուղղակի դիմեցին Պոլիս թէ գրով և թէ հեռագրով. վերջապէս յաջողեցան քննիչ բերել տալ Պոլսէն Զարշամպայ։ Քննիչները անուրանալի իրողութիւններու առջև չհամարձակեցան գործը ծածկել, բայց քննութիւնը որևէ արդիւնք չունեցաւ. բանն այն է, որ կայսեր պալատան մէջ պաշտպան ունի եղեր. ասոր համար ալ անշուշտ կատարուած քննութեանց տեղեկագիրը մ'ինտերալթի կըլլայ (խափանում)։ Զարշամպացիք դեռ չեն յուսահատած և 10 հոգիի չափ Թուրք, յոյն, հերքեզ երևելիներ Պոլիս գնացած են իրենց խնդրոյն լուծում մը տալու։ Խե՜ղճ մարդիկ. ինչ կը փնտրէք այդ աւազակաց ոստայնի մէջ.-արդարութիւն, ողորմութիւն, կերևայ թէ շատ միամիտ, խակ էք դեռ և կամ ձեր քսակները շատ պարարտ են։

Գալով բուն խնդրին, Մուսա փաշայ քանի մ'անգամ Տ. Թադուլէն ստակ կը պահանջէ իւր գործակալներու ձեռքով. բայց որովհետև սոյն առաջարկ անպատասխան կը մնայ, ճարահատած վերոյիշեալ ամբաստանութիւնը ընել կուտայ, որպէս զի որևէ հիմ ունենայ Տ. Թադուլէ ստակ կորզելու։

1894 օգոստոսի վերջերը գայմագամին հրամանով քահանայի գիւղը կերթան Մէհմէդ Օնպալի, Ալի զափթիայ, Զապլթայ քեաթիպի Գաղը-օղլու Մէհմէդ և երկու զրպարտիչները, ուր անլուր հայհոյանքներ և սպառնալիքներ կը թափեն քահանային և գիւղացւոց գըլխուն ու 30 ոսկի կը պահանջեն։ Ամբողջ գիւղի բնակիչք սարսափած Ճարահատ կընեն, 53 մէջիտ հաւաքելով, կը յանձնեն Զապլթայ քեաթիպի Մէհմէդ էֆէնդուն։ Այս գումարը բաւական չտեսնելով և կը ստիպեն մարթիլցիները 30 ոսկին լրացնել անպատճառ, յայտնելով, որ եթէ պատրաստ դրամ չունեն, կրնան մուրհակ տալ. քահանան և գիւղացիներ հազար աղաչանքով 15 օրէն վճարելի 12 ոսկիոյ մուրհակ մը տալով, կը հաճեցնեն անպատկառ աւազակներն հանդարտութեամբ վարուելու։ Գայմագամին պատառն այսպէս պատրաստելէ յետոյ, իրենց աշխատութեան իբր վարձ երկու օր գիւղը կը մնան, ուզածնին կուտեն, կը խմեն, 5 ոչխար կը մորթեն և առանց խուզարկութիւն կատարելու, առանց ամբաստանութեան ապացոյց մը փնտրելու կը մեկնին քաղաք։

Գիւղացիք տեսնելով իրենց յանիրաւի կողոպուտը և կատարեալ անմեղութիւնը, 10-12 օր վերջը Զարշամպայ կերթան և Մուսա փաշային գանգատ կը յայտնեն Մէհմէտ էֆ. և ընկերներուն դէմ։ Գայմագամը հայհոյելով կը վանտէ զանոնք. Տ. Թադուլ յետ չկասեր, Սամսոն երթալով կը բողոքէ կառավարիչ Նուրի փաշային և Վալիին կը հեռագրէ, պարզելով գայմագամին գործած անհամար զեղծումներն։ Գայմագամն ալ իր կողմից անգործ չը մնար. տեսնալով, որ տ. Թադուլ կամաց կամաց վտանգաւոր կը դառնայ, որոշեր է զանի յանցաւոր ցոյց տալու պատրաստութիւններ տեսնալ։ Ուլու-Փուղար գիւղէն Ցակոբ Ռումեան անձին ճնշման ներքոյ վկայել կուտայ, թէ տ. Թադուլ մարթիլի հրացան կը բաժնէ գիւղացւոց „խռովարարական" նպատակներով և ինձի ալ հատ մը տուած է։ Բայց երբ Տ. Թադուլի պահանջման վրայ Սամսոն կը բերուի այս վկան, կը յայտարարէ, թէ ինք քահանայէն ոչ մի բան առած չէ և թէ ի գործ դրուած տանջանքներէն ստիպուած ստորագրեր է Զարշամպայի գայմագամին պատրաստած վկայութեան արձանագրութիւնը։

Նուրի փաշայ վալիին կը հաղորդէ հարցաքննութեան արդիւնքը, որուն վրայ գայմագամը կշտապէ հեռագրել իւր սիրեցեալ պետին հարկ եղածը, միևնոյն ատեն Սամսոնի միւթէսարիֆը քահանային պաշտպան ցոյց տալով։ Անմիջապէս Տրապիզոնէն քննիչ մը՝ Ֆէթիչ անունով, կը ղրկուի Սամսոն, որուն առաջին գործը կըլլայ Տ. Թադուլը և Ռումեան Ցակոբը անմիջապէս ձերբակալելով, բանտարկել և անկէ վերջ քննութեան ձեռնարկել։ Մինչ այս, մինչ այն քահանան 4-5 ամիսէ ի վեր բանտը կը մնայ „շնորհիւ վեհ. Սուլթանին արդարադատ կառավարութեան"։

Մենք այս դէպքը քիչ մը մանրամասնութեամբ յիշեցինք պատկերացնելու համար սուլթանական բռնապետութեան ներքին աւազակային արարքները և միանգամայն պարզելու տեղի ունեցած բանտարկութեանց իսկական պատճառները։

Միւս քահանան է Ինիոյ գաւառակի Քէօփլուկ գիւղէ Տ. Միքայէլ Թահմազեան։ Բանտարկութեան պարագաները յար և նման, միայն գործողը Մուսա փաշան չէ, այլ Իպրահիմ պէյը, որ դեռ տարի մ'առաջ Թրիպոլիի եղած ատեն սահմանէն այնչափ դուրս կելնայ, որ պաշտօնանկ կըլլայ. միայն թէ աւելի մեծ գաւառակի մը Ինֆարի գայմագամութեան կը կոչուի, որտեղ ալ կատարած անթիւ հաւատարմական ծառայութեանց փոխարէն դեռ մի երկու ամիս առաջ Բասէնի գայմագամ կը նշանակուի, որտեղ ասպարէզը բաց ըլլալուն ժողովրդեան արիւնը կարող է ծծել։

գանգ ձէ, որ դրանք զբաղուում են նրա վիճակով, բայց՝ յուսեան հատար անհրաժեշտ պայմանները են, որովհետ-

Սամսոնի բանդարկեալներու մէջ 86 տարեկան ծերունի մը, Գարա Արթիւն Դաւիթ անունով, Զարշամպայի Թէքիդ գիւղէն։ 5 ամիսէ ի վեր բանտարկեալ է իբր յեղափոխական, բայց իսկական յանցանքը՝ չէ փութացած Մուսա փաշայի պահանջած 50 ոսկին վճարել։

Նոյնպէս Զարշամպայէն Ֆէրտինանդ անուն 13 տարեկան պատանեակ մը, որ Իւնայի գիւղերէն մէկուն մէջ գտնուած հօրեղբօրը տունը կերթար՝ ձերբակալեցին։ Այս ալ կամբաստանուի իբր քարոզիչ խռովարարական գաղափարներու։ Դատարանը քիչ համարելով եղած զբաղարտութիւնը, դիտմամբ տղուն տարիքը 18 ցոյց կուտայ, որպէսզի տրելիք պատիժն կատարեալ ըլլայ։

Ըստ Թրքական օրինաց 14 տարեկանէ վար եղողները տղայ կը համարուին և հետևաբար կրելիք պատիժին շատ թեթև։

Վերջերս Պոլսոյ թերթերուն մէջ, իբր կարևոր բան մը, հետևեալ ստաբանութիւնը կը կարդանք.—

—„Ձերբակալում.–Զարշամպայի կառավարիչ Մուսա փաշան յաջողեր է ձերբակալել Բահան օղլի Շաքիր և Մէհմէդ անուն աւազակները, որոնք շատ տարիներէ ի վեր Նոյն գաւառակին սահմաններու վրայ շահատակութիւններ կը գործէին։

„Վերջերս ալ, Սամսոն բանտարկեալ երեք մարդասպան բանտէն բաղնիքը մտնելով գմբէթը ծակեր ու փախեր էին։ Այս վերջիններն ալ բռնուեցան, մէկ զարնուած և միւս երկուսն ալ ողջ։

„Բոլոր այս ոճրագործները Զարշամպայի հրապարակին վրայ բերուած ատեն ժողովուրդը մեծ բազմութեամբ հոն գացեր է տեսնելու համար։Մուսա փաշայ այս առթիւ ճառ մ՝արտասանելով, ըսեր է.— Ահա այսպէս պիտի բռնուին բոլոր այն աւազակները, որոնք կը համարձակին խանգարել այն ապահովութիւնը, որուն ներքև կապրինք շնորհիւ վեհափառ սուլթանին“։

Մինչդեռ հաւաստի աղբիւրներէ կը տեղեկանամք, թէ յիշեալ անուններով աւազակներ գոյութիւն անգամ չունին այն կողմերը։ Հապա նշանաւոր է Գոյրքճը օղլի Արիֆ աւազակը, որուն թագոյցը իր վաղեմի ընկեր և պետ՝ Մուսա փաշայի տունն է. իսկ Սամսոնի բանդէն փախչողները 6 են (2 հայ, 2 Թուրք, 2 յոյն) և ոչ թէ 3.— բռնուողներն ալ 2 են. մէկ զարնուած և միւսը ողջ (1 հայ փախչողներէն և 1 հայ էլ դրսէն օգնական)։ Անշուշտ աւազակ Սուլթանն ալ արժանապէս կը գնահատէ իրենց արժանի պաշտօնեային ճառը և անուրանալի բարեմասնութիւնները (Օսմանեան կառավարութեան տեսակէտով)։

1895 Յունվարի 1-ին երեկոյան դէմ Տրապիզոնէն իբր քննիչ ղրկուած Ֆէթէհ Սամսոնի մէջ յանկարծակի կը մեռնի և միւս օրը կը թաղուի. սակայն կառավարութիւնը մէկ օր վերջ կասկածելով, թէ մի գուցէ հայերն թունաւորած ըլլան, դիակը գերեզմանէն կը հանուի և բժշկական քննութեանց ենթարկուելով, կը հաստատուի, թէ կաթածահար եղեր է։ Տրապիզոնի մէջ ալ օր օրի վրայ հայոց և Թրքաց յարաբերութիւնները կը լարուին, ամէն ամիս բիւրդ Համիդիէ հրոսախմբերու դրօշակ, պարգև տանող փաշաներու անցուդարձը չէր բաւեր վերջերս ալ Վէհպի փաշան հանդիսով Տրապիզոնէ անցաւ Երիզայ տանելու Սասնոյ կոտորածին յաջողութեան համար Զէքի փաշայի իբր վարձատրութիւն շնորհուած շքանշանը։

—Քիչ վերջը Թուրք քննիչ յանձնաժողովն ալ եկաւ հագին ժխորով մը. ասոնցմէ 20 օր ետքը եւրոպական նները եկան։ Այս ամենը յուզեցին երկու ազգերը տարբեր զգացումներով. հետզհետէ լոյս տեսնող պաշտօնական զեկուցումները, հերքումներն այնչափ գրգռիչ ոճով էին, որ Թուրք ամբոխը կատղեցաւ Հայոց դէմ։ Եւ ահա առիթը կը ներկայանայ Թուրք աղաներուն և կառավարչական պաշտօնեաներուն շուտով գործադրութեան դնելու վաղուց ի վեր մտածուած մի ծրագիր.–անխնայ կոտորել Հայերն։ Կոկսին ստորագրութիւն ժողովել նշանաւոր աղաներէն. ի վերջոյ կերթան պաշտօնացի Թուրք հարուստի մը, որ կը մերժէ եղած առաջարկութիւնը և վախով կերթայ գործին վիճակը զինուորական Ֆէրիք փաշային իմաց կուտայ։ Ֆէրիք փաշան ալ կշտապէ վալիին մօտ կը հասկցնէ՝ որ շատ վտանգաւոր է Տրապիզոնի նման քաղաքի մը մէջ այդ տեսակ կոտորած մ՝ընել, մանաւանդ որ կայսերական իրատէ ալ այս մասին չկայ. կը յայտարարէ, որ եթէ այդ նպատակով որևէ յարձակում ըլլայ, պիտի կոտորել տայ Թուրք խուժանը յանուն կառավարութեան շահերուն։

Աւելորդ է ըսել, թէ գործին առաջն առնուեցաւ, բայց մեզ՝ հայերիս երբէք ապահովութիւն չընծայիր այս առժամանակեայ հանդարտութիւնը։ Այս վարկենական գրգռումնք չէ, այլ գիտակցական մտադրութիւն է և այս ոչ թէ առաջին անգամն է, այլ երրորդն է։ Գուցէ նպաստաւոր առթի մը կսպասեն գործը գլուխ բերելու համար։ Ալ կը մնայ տրապիզոնցի հայերս խորհել, կշռել վտանգը և անոր համեմատ ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առնել, եթէ չուզեր իբր նահատակ ոչնչանալ։

Քաղաքիս բերդի կողմը Թուրք ժողովրդեան զէնք բաժանուեր է կառավարութեան կողմէ և մէկ քանի մըզկիթներու մէջ ալ բաւական քանակութեամբ ռազմամթերք լեցուցած են։

Առանց հայերու հաւանութիւնը ստանալու, գաղտնի ժողովներու մէջ որոշեցին ամեն թաղի վրայ գիշերային երկու պահապան դնել, պաշտօն յանձնելով նոցա մասնաւորապէս լրտեսել հայերը և ի հարկին վրանին խուզարկել։ Ասոնց ամսականները թաղեցիները պիտ վճարեն, որով բաւական չլինելով արդէն ծանրածանր տուքերը, իւրաքանչիւր տան վրայ տարեկան 35-40 ղուշ տուրք մ՝ալ աւելացաւ։ Գիւղերու մէջ ալ նմանօրինակ պահապաններ ևս կարգուեցան. հայաբնակ տեղերու մէջ մէկը հայ, իսկ միւսը անպատճառ Թուրք. այն ալ ինչ տեսակ Թուրք...

ՆԱՄԱԿ ՔՂԻԻՑ

Մինչև Սասնոյ կոտորածը Քղիի և շրջակայ հայաբնակ գիւղերու վիճակը թէև դաժն էր, թէև անօթի

բէյերու, Թուրք պաշտօնեաներու կամայականութիւններն, բռնութիւն ու կեղեքումներն անպակաս էին, թէ և Թուրք խուժանի կողմէն գողութիւն, յափշտակութիւն և ատելութիւն երբեմն երբեմն տեղի կունենային, բայց այժմ Սասնոյ կոտորածէն ետքը մեր երկիրը կատարեալ փոփոխեցաւ։ Այդ փոփոխութիւնն այն աստիճան մեծ եղաւ, որ մեր երկիրը այժմ անճանաչելի է և երբէք չի նմանիր 6-7 ամիս առաջ մեր տեսած երկրին։ Թուրք անօթի բէյերը, որոնք բազմաթիւ են մեր կողմերը, այժմ մէկ մէկ իշխան դարձած են և հայ գեղերու պատիժ, պատուհասը եղած են։ Բէյերու բռնութեանը, կամայականութեանը չափ ու սահման չմնաց, մանաւանդ այն օրէն, երբ մեր գիւղերու հսկողութիւնը, պահպանութիւնը և պատասխանատուութիւնը կառավարութենէն պաշտօնապէս յանձնուեցաւ այդ բէյերուն։ Այս առաջուայ կատու, անօթի բէյերն այժմ առիւծ են դարձած և փաշայի պէս կապրին, իրենց բոլոր պէտքերը հոգալով հայ գիւղացիներէն։ Բէյի ծառայի որ և է պէտքը, պահանջը եթէ մէկը անմիջապէս չկատարէ և յանդգնի մերժել, չարաչար կը պատժուի և կը տուժէ իր ամբողջ ընտանիքով, իր ամբողջ կարողութեամբ։ Հայ գիւղացին այժմ բէյերու և Թուրք պաշտօնեաներու համար ճիշտ կթի կովի պաշտօն կը կատարէ։ Հայ գիւղացին ոչ միայն ձրիաբար օրերով անմռունչ պիտի ծառայէ Թուրք բէյերուն, զափթիին, միւդիրին, գայմագամին, միւլեզիմին, այլ և պարտաւոր է անոնց և անոնց նշանակած գիւղի պահապաններուն կերակրել, հագուցնել, նոյնպէս ասոնց ձիերուն իր հաշուով, իր քըրտինքով։ Մեր բոլոր գիւղերու վրայ 2 ամիս է Թուրք պահապաններ են կարգուած, որոնց թէ պիտի կերակրենք, հագուցնենք և թէ ամսական պիտի տանք։ Գայլը գառերուն, աղուսը հաւերուն պահապան կարգուած են։ Առակախօսի այս գեղեցիկ առածը կատարեալապէս, ամենայն ճշտութեամբ մեր արդի վիճակին կը յարմարի։

Կեղեքումները, թալանները, առևանգումները, ատելութեան ցոյցերը, կամայականութիւնները, բռնութիւնները, բռնի Թուրքացումները, որ առաջ երբեմն երբեմն և տեղ տեղ կը կատարուէին, այժմ կառավարութեան շնորհիւ և անոր դրդմամբ ու խրախուսանօք թէ ընդհանրացած են, թէ սովորական, առօրեայ երևոյթ են դարձած և թէ աւելի աներկիւղ, անպատիժ կերպով կը կատարուին։ Թուրք և հայ տարրի յարաբերութիւնը, որ առաջ բարեկամական էր, լաւ էր, -չհաշուած սակաւադէպ պատահարները, այժմ բոլորովին փոխուեր, թշնամական է դարձեր և օր աւուր սուր, մինչև իսկ պատերազմական կերպարանք առնելու վրայ է շնորհիւ մոլլաներու, բէյերու, պաշտօնականներու գրգռութեան։ Օր չանցներ, որ գիւղերու մէջ գողութիւն չըլլայ. ոչխար, կով, եզ, ջորի ամենայն օր կը գողցուին։ Շատ անգամ տէրը տեսեր, գտեր է իր գողցած տաւարը, բողոքեր է, բայց անլսելի մնալէն զատ, պատժուեր և բանդարկուեր է իբրև խռովարար, իբրև ամբաստանիչ և կառավարութեան անհաւատարիմ։ Ունևոր բանդարկեալներէն իբրև տուգանք մինչև քանի մը ոսկի ալ չեն քաշած, չեն արձակած, իսկ աղքատներուն քանի մը շաբաթ բանդի մէջ ապաշխարութիւնէն ետքը հայհոյանքով և լաւ ծեծ քաշելէն ետքը արձակած են, սպառնալով եթէ միւս անգամ ալ յանդգնի որևէ խլամի վրայ որևէ զբպարտութիւն, ամբաստութիւն անել, յաւիտեան կը բանդարկուի։

Փաստերու միառմի արձանագրութիւնը թողնելով ուրիշ անգամու, այս անգամ բազմաթիւ իրողութիւններէն մէկը յիշեմ, ուր կը փայլի Թուրք տարրի յարաբերութիւնը դէպի հայ տարրը։

Սեպտեմբերի վերջերուն քղեցի Թուրք և հայէ բաղկացած քարաւան մը կը վերադառնար Կարինէն։ Ճամբան խումբ մը հնծեալ քիւրդեր,-որոնցմէ 3-ը քիւրդ հնծելագունդի հագուստով,-կը յարձակին քարաւանի վրայ։ Ջորեպաններուն կը հրամայուի առանց դիմադրութեան անձնատուր ըլլալ, սպառնալով անհնազանդին մահով պատժել։

Քիւրդերը կսկսին քարաւանը քշել իրենց ցանկացած կողմը։ Ջորեպանները համիդիէ հնծելագունդի անդամներէն մէկու ոտները կիյնան (ջորեպանները այս մէկը նշաններէն և դիրքէն աւազակախումբի պետ կընդունին), լալով կաղաչեն, Մարգարէի անունով կը խընդրեն, որ գթան և իրենց ջորիները վերադարձնեն։ Թուրք ջորեպաններուն կը յաջողի շարժել աւազակների պետի գութը և նա կը հրամայէ մահմեդականներուն զատել իրենցը։ Թուրքերէն մէկը իրենի հետ կը զատէ աղքատ և իր համակրելի հայու երկու ջորիները։ Երբ մահմեդականները իրենցը կը զատեն, աւազակապետը կը հարցունէ թէ՝ հայու ջորի չխառնեցին իրենցի հետ։ Ամենքը կըսեն, որ բոլորը մերն է, իսկ մնացեալը հայերուն է։ Հայերու բոլոր աղաչանք-պաղատանքը՝ իրենցը ևս վերադարձնել, ապարդիւն կանցնի։ Աւազակապետը, կասկածելով, թէ մի գուցէ Թուրքերը խաբէութեամբ հայերուն ևս խառնած ըլլան իրենցի հետ, կըսկսէ մէկիկ մէկիկ Մուհամէդով, ղորանով երդուեցնել։ Պատահաբար առաջին անգամ կերդուեցնեն այն բարի, կարեկից տաճկին, որ իր ընկեր հայու երկու ջորին ևս խառնած էր իրենի հետ։ Ազնիւ տաճիկը կը զլճանի մինչև իսկ երդուել, որպէս զի ընկերինը ազատի։ Բայց մէկալ Թուրքերը չեն հետևիր ընկեր Թուրքի օրինակին և կը յայտնեն գաղտնիքը։ Աւազակները կատաղած Թուրքի սուտ երդման վրայ, որ շուն հայու համար Մարգարէի և ղուրանի վրայ սուտ կերդի, Թուրքի գլխուն սոսկալի հայհոյանքներ, Թուք ու մուր թափելէն ետքը, լաւ ծեծ մը կը քաշեն և ի լրումն ամենայնի, որպէս պատիժ, կը խլեն Թուրքէն և իր ջորս ձին։

Թուրք տարրի մէջ սկսել է տիրապետել այն հասկացողութիւնը, թէ գեավուրի ինչքը, սեփականութիւնը Թուրքին կը պատկանին. հետևաբար, բնաւ չեն խղճահարիր, մեղք չեն համարիր հայու գոյքի յափշտակութիւնը։ Եւ եթէ այս սոսկալի վիճակը երկար շարունակի, ամբողջ ժողովուրդը կաղքատանայ, կոչնչանայ և հետևաբար կը ցրի իր և իր ընտանիքի գէթ գոյութիւնը պահպանելու համար։ Ասոր վրայ աւելացրէք այն սոսկալի խստութիւնները, որով կառավարութիւնը սկսած է հարկերը հաւաքել, ծախել տալով ոչ միայն

գառը չէ, որ գրանք զբաղուում են նրա վիճակով, բայց՝ յուսեան համար անհրաժեշտ պայմաններ են, որովհետ-

այծ, ոշխար, ջուրի, այլ և երկրագործական գործիքներ, արտ և մինչև իսկ տան պղնձեղէն ու պարտէզի ծառերը։

Քղիի պատրիարքական տեղապահը և Թաղական խորհուրդը փոխանակ իրենց դիմողներուն օգնելու, այս սղութեան, ընդհանուր աղքատութեան ժամանակ կառավարութեան առջև միջնորդելու, բարեխօսելու, որ կամ տուրքերու հաւաքումը յետաձգի կամ մաս առ մաս տրի, ընդհակառակը, ժայռ ու ապառաժ կտրած, միացած են հարկահաններուն հետ և կօգնեն նրանց ուժասպառ, կիսակենդան ժողովրդի վերջին մնացորդներն ալ հաւաքելու։ Ամեն օր ձեռքն ընկածը կը շալկէ . . . Ծով ըլլար, կը ցամաքէր, ուր մնաց մեզի նման աղքատ, հարստահարեալ ժողովուրդ մը։

ԱՏՈՎՄ ԱՍԼԱՆԵԱՆ

(Տրապիզոնից)

Յունուար 24-ին Ի. Պոլսէն հեռագրով կանչուեցաւ Ատովմ Ասլանեանը։ Միւս օրը անմիջապէս տաճկական „Շէրիֆ Բէյան“ շոգենաւով Թուրք դատապարտեալի մը հետ ճամբայ հանուեցաւ դէպ ի Կ. Պոլիս։

Ատովմ դատավարութեան մէջ (ինչպէս պիտի տեսնէք ղրկուելիք տեղեկագրէն) գովելի համարձակութեամբ խօսողներէն և սուլթանի կառավարական պաշտօնէութեան ստոր, անբարոյական, լկրտուած բարեմասնութիւնները ի տես ամեն ազգի ժողովրդեան փաստերով պարզողներէն մին եղաւ։ Իր արտասանած խօսքերը դողացուցին ճշմարտութեան անունը չլսած, փտած պաշտօնեաները և մեծ յուզում առաջ բերին հայ և Թուրք ժողովրդեան մէջ։

Կառավարութիւնը չգոհացաւ 15 տարուան բերդարգելութեան դատապարտելով զայն և մտածեց Թուրք չարագործ-մարդասպան բանդարկեալներու ձեռամբ մարել այդ „վտանգաւոր“ հայի կեանքի ճրագը և գաղտնապէս հրահանգեցին զանոնք իրարու մէջ կռիւ հանել, ծեծկուել, գրգռել հայ բանդարկեալները, մասնաւորապէս Ատովմը ու ծագած ընդհանուր խառնաշփոթութեան մէջը ջարդ ու փշուր ընել Ատովմը և յարմար առթին սպանել։ Սակայն իրր մարդասպան ու աւազակ դատապարտուած տգէտ Թուրքերը, սուլթանի կառավարութենէ աւելի փչացած չեն եղեր։ Կը տեսնէք կառավարութիւն մը, որ ինքզինքը անամօթաբար „արդարադատ“ կը հռչակէ, չյագենալով ամբողջ կենսատու սերունդ մը խոնաւ բանդերու մէջ փտեցնելէն, խիղճ չըներ 15 տարուան հայ դատապարտեալ մը, որուն կեանքը թունաւորած է արդէն այդ վճռով, ամենաստոր միջոցներով ոչնչացնել, մինչդեռ անդին դողեր ու աւազակներ, գէթ կորուսած չըլլալով մարդ էակին վերաբերող գութը, արգելք կըլլան այդ ոճրին, իմացտալով Ատովմին իրենց տրուած հրահանգները և խրատելով, որ զգոյշ կենայ ու լարուած որոգայթին մէջ չիյնայ։ Հոգեբան ըլլալու հարկ չկայ այդ երկու դասերու ճշգրիտ տարբերութիւնը չափելու և առաջինին (Թուրք կառավարութեան) անհամեմատ գերազանցութիւնը որոշելու համար։

Ատովմ, իմանալով իր դէմ եղած ձեռնարկութիւնը, շուտով տեղւոյս անգլիական և ռուսական հիւպատոսներուն գործն իմացուց, յայտնելով, որ իր կեանքը վտանգի մէջ է։ Անգլիականն իսկոյն վալիին կերթայ և քննութիւն կը պահանջէ։ Վալին իրր թէ չէր գիտեր, զարմանք կը յայտնէ։ Կը քննեն պահապան զապտիներ և մի քանի բանտարկեալներ, կը յայտնուի, որ իրրաք Ատովմը մէջտեղէն վերցնելու մտադրութիւն կայ եղեր։ Հիմա որ Ատովմ Պոլիս կը ղրկուի, ամենին կասկածը կը տիրէ, թէ մի գուցէ ճանապարհին զայն անհետացնեն և այդ էլ այնպիսի պարագաներու մէջ, որ գործն իմացուած ատեն կարենան իւղի պէս ջրի երեսը ելնել։ Արդեօք ի՞նչ չըրին և անպատիժ չմնացին, քանի՞ քանի՞ անմեղներ բանտերու մէջ չեն փտեցուցած, որչափ հայ բանտարկեալներ ծովի անդունդը չեն նետած, քանի՞ հազարաւոր մանկունք, կանայք, անզէն մարդիկ կտոր կտոր չեն ըրած և անպատիժ մնացած ու ամեն ասոնց քով Ատովմ մը անհետացնելը մեծ բան մ՚է՞ Թուրք կառավարութեան համար։

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ԻՐ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Թուրք կառավարչական շրջանի մէջ յուզումներն օր աւուր սուր կերպարանք կստանան։ Ազիզի, Մուրադի, Ռէշիդի կուսակիցները մի կողմէն, „Երիտասարդ Թիւրքիայի“ հատ ու կտոր ներկայացուցիչները մէկալ կողմէն կը շարունակեն տիրող կառավարութեան դէմ իրենց պրոպագանդան։ Կըսուի թէ վառարանով մը ուզած են Եղրդի քէօշքը օդը պայթեցնել, բայց իմացուեր է և վառարանի պատերի մէջ մեծաքանակ ուժանակ գտնուեր է։ Այս յայտնութեան հետևած են բազմաթիւ ձերբակալութիւններ, որոնցմէ շատերուն Մողբէն իր աչքի առջև կախել տուած է, շատերուն Մարմարայ նետած են և շատերուն ալ աքսորած։

Անգամ մըն ալ Մողբը հաց կերած ատեն պնակի տակ թուղթ մը կը գտնէ, որով կը յայտնեն իրեն, որ ինքնակամ հրաժարի գահէն, հակառակ պարագային Ազիզի վախճանը կսպասէ իրեն։ Մողբը կը կատաղի, կը հրամայէ պալատի բոլոր դուռները գոցել, կասկածելիները ձերբակալել. բոլոր պալատականները, սպասաւորները ամենախիստ հսկողութեան և հարցաքննութեան կենթարկուին։ Դարձեալ կախաղան, աքսոր, բանտ և շատերն իրենց գերեզմանը կը գտնեն Մարմարայի մէջ։

Զինուորական դպրոցի աշակերտները բոլորն արձակուեցան և իրենց տուներն ուղարկուեցան։ Անցագրերը շոգենաւերու մէջ դրուած է։ Կըսուի թէ՝ տուն ուղարկելը միայն պատրուակ եղած է աքսորելու համար։

Դերվիշ և Փուադ փաշաները պալատի մէջ զինուորական դպրոցի աշակերտներու արտաքսման խնդրոյ համար սաստիկ կռուած, անլուր կերպով իրար հայհոյած և լաւ մը իրար տփած են։ Խենթ և հուժկու Փուադը աղէկ մը ջարդած ու աղցան ըրած է զԴերվիշ փաշան։ Քիչ մըն ալ եթէ ուշ օգնութեան հասնէին, Դերվիշն սպանուած կըլլար։ Փուադը զինուորական դպրոցի աշակերտներն ճամբելուն հակառակ է եղեր,

իսկ Դերվիշը կողմնակից և կրցել է համոզել սուլթանին, որն անմիջապէս ստորագրած է ճամբելու իրադէն։ Փուադը իմանալով այս՝ յարձակում է գործեր Դերվիշի վրայ։

Բերայի մէջ գործած 13 սպանութիւններու, նոյնպէս Պօլսի ուրիշ արարձաններու մէջ գործած սպանութիւններն և վիրաւորումները թուրք ֆանատիկոսներու գործ է։ Բերայի աղէտի հեղինակները բարձրաստիճան փաշաներու զաւակներն են եղեր, որոնք ելլեր են Նշան Թաղի ապարանքներէն և իրենց սխրագործութիւններէն ետքը նորէն իրենց ապարանքները դարձած են ապահով կերպով։ Ոստիկանութիւնն այդ շատ լաւ գիտէ, բայց հեռու ձորի մը մէջ գինով զինուոր մը գտեր է, որը կը ցուցնէ իբր հեղինակ այդ սպանութեանց և խաբել կը կարծէ օտարներուն։ Սուլթանի հրամանով Նշան Թաղը (բոլոր փաշաները հոն կը բնակին) և Բերան պաշարման մէջ են։ 50 քայլի վրայ մէկ մէկ ոստիկանով կը հսկեն։ Գիշերները Նշան Թաղի մէջ արգելեալ է փաշաներուն իրար այցելութեան երթալ։ Բոլոր փաշաներու տունները և իրենց ամէն քայլերը կը լրտեսին. Սուլթան Համիդը վախնալով, որ Ազիզի վախճանն ունենայ, սոսկալի կասկածոտ դարձեր է և աջ ու ձախ արիւն կը հոսեցնէ, կը կախէ, կը գլխատէ, որպէս զի իր գահի վրայ մնայ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

«Դրօշակի» № 13-ում մենք արդէն համառօտակի ծանօթացրինք եւրոպական մամուլի յայտնի կարծիքների հետ Սասունի կոտորածի վերաբերմամբ։

Այն ժամանակ մինչդեռ եւրոպական մամուլի մի մասը՝ նկարագրելով տեղի ունեցած սարսափները, պահանջում էր հայկական հարցի անյապաղ լուծումը, իսկ միւս մասը՝ յենուելով մասամբ տաճիկ դեսպանների արած հերքումների վրայ, չէր ուզում հաւատալ, կարծելով այն զուտ երեւակայութեան ծնունդ։ Վերջին ժամանակներս, երբ արդէն փաստը փաստ է, երբ տխուր իրականութեան դէմ արդէն կասկածի ոչ մի տեղիք չի մնացել, քաղաքակիրթ աշխարհի ամբողջ մամուլը՝ առանց խորութեան գոյնի եւ ուղղութեան, բացի կաշառածներից, յորդոր է կարդում եւրոպական պետութիւններին բաւարարութիւն տալ հայերի արդարացի պահանջներին, բարեփոխել նրանց դրութիւնը։

Մամուլի այդ բողոքներին միանում է եւ հասարակութիւնը։ Տեղի են ունենում բազմաթիւ մեծ միտինգներ Անգլիայում, Ամերիկայում, ինչպէս մեզ գրում են Բոլգարեայի մեր թղթակիցները եւ այնտեղի մի քանի քաղաքներում։ Այդ ժողովներում ատելաբանները՝ բնաբան վերցնելով Սասունի կոտորածները, տաճիկ զինուորների եւ քիւրդ պաշիբուզուկների գործ դրած քսմնելի բարբարոսութիւնները, դատապարտում են այդ գազանութիւնների հեղինակ սուլթանի կառավարութիւնը, բողոքում են պետութիւնների դէմ, որ տանում, թոյլ են տալիս այնպիսի սարսափներ։ Միտինգները արձանագրութիւններ են կազմում, ներկայացնում Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին, խնդրում նրանց միջամտութիւնը՝ պաշտպանել մի նահատակ ժողովրդի անբախտ զաւակներին, լուծել վերջապէս հայկական հարցը։

Ձայն է բարձրացնում եւ հանճարեղ ծերունի Գլադստոնը։ „Ժամանակ է, ասում է նա իր մի ճառի մէջ „Անգլօ-Հայկական" ընկերութեան պատգամաւորներին, ժամանակ է, որ մի ընդհանուր անէծքի աղաղակ, այլ եւ գործի բարձրաձայն անէծք ուղղի այդ դաժան չարագործութեան դէմ։ Վիրաւորած մարդկութիւնը ձայն պէտք է բարձրացնի եւ այդ ձայնը հասցնի Սուլթանի ականջին եւ նրան զգացնել տայ, եթէ առհասարակ որ եւ է բան կարող է նրան զգայուն կացուցանել, տեսնելու իր բռնած սոսկալի ընթացքը։ Այս սարսափները անպատուութիւն են քաղաքակրթութեան համար, լայն մտքով վերցրած, նրանք ապտակ են մարդկութեանը"։

Բողոքի շանթեր է արձակում եւ ֆրանսիացի յայտնի գրող տիկին Սեվերինը ֆրանսիացիներին ուղղած մի նշանաւոր յօդուածում։ „Բայց ես զայրանում եմ, բացականչում է նա, լռութեան դէմ, եսասիրութիւնից բղխած այն եղեռնագործ ապատեայի դէմ, որ դարձնում է աչքերը, փակումականջները։ Օ՜ն, ոտի՛ ելէ. դու, որ չես ուզում նայել, կը նայես, երբ ես ստիպած կը լինես բռնել քո ականջներից, որ դարձնեմ քո անտարբեր դէմքը, որ ստիպեմ քեզ նայել սոսկումը դէմառ դէմ, ողջ սոսկումը կոտորածի։ Դու, որ չես ուզում լսել, դու կը լսես աղմուկները, աղաղակները, մահու հռնչիւնները եւ խռպոտ աղօթքները օրհասականների"։

Բողոքներ են կարդացուում եկեղեցական բեմերից (Անգլիայում)։ Բողոքում են նոյն իսկ հեռու Հնդկաստանի մահմեդական ուլեմները։

Իսկ ի՞նչպէս են վերաբերուում, ի՞նչ քայլ արեցին եւրոպական պետութիւնները։ Նրանցից մի քանիսի առաջարկութեամբ սուլթանի կառավարութիւնը ստիպած եղաւ «մի քննիչ յանձնաժողով» ուղարկել «քննել» իր ծառաների քսմնելի արարքը։ Իսկ Անգլիան, Ֆրանսիան եւ Ռուսիան ուղարկել են իրենց ներկայացուցիչները։

Թէ ինչ հետեւանք կունենայ այդ, թէ ինչ յայտագիր պիտի ներկայացնեն նոքա, դժուար չէ ենթադրել։ Գործի սկիզբը մեզ նախագուշակել է տալիս եւ նրա հետեւանքը։ Յանձնաժողովը միմիայն Մուշ հասնելու համար գործ է դնում ամբողջ երկու երկար եւ ձիգ ամիսներ։ Նա սկսում է քննութեան գործը։ Սուլթանի խորամանկ կառավարութիւնը աշխատում է հեռացնել բոլոր վկաներին, էրզրումի եւ Բիթլիսի հայ բանդարկեալներին հեռացնում, ուղարկում է երկրի խորքերը, կոտորածներին մասնակցած 300 քիւրդ ընտանիքներ դէպի Դամասկոս, կաշառում կամ նոյն իսկ բռնութեամբ ստիպում սրանց նոստ վկայութիւններ տալ, խանգարում է 3 պետութիւնների ներկայացուցիչներին մտնել այն գիւղերը, որոնք այրած, քար ու քանդ են արուած։ Նա արգելում է եւրոպական թղթակիցներին գնալ Հայաստան, հետեւել քննութեան գործին։ Մի խօսքով, նա ճիգ է թափում, գործ է դնում ամէն միջոց, որ մի կերպ ծածկէ ճշմարտութիւնը, խլացնէ դարերով ճնշած, հալածած, անքող ժողովրդի լաց ու կոծը, արդար բողոքը։ Այս բոլորը լաւ տեսնում եւ լսում են պետութիւնները։ Նրանք իրանք էլ համոզուած են տեղի ունեցած եղեռնագործութիւնների ճշտութեան մէջ։ Բայց նրանք լռում են։ Նրանք մոռացութեան կը տան եւ այս սարսափելի կոտորածները։

„Եւրոպան, ասում է իտալական «Պերրօկէ» ծաղրաթերթը հայկական կոտորածների առթով, որ փութով վազում է ամէն տեղ, ուր կայ ուտելու որ եւ է մի բան, այնքան էլ չի շտապում, երբ հարկաւոր է լինում բարի գործ անել։

„Ճիշտ է, շարունակում է նոյն թերթը, որ վճռել են մի քննութիւն անել. բայց բոլորն էլ գիտեն, որ քննութիւնները ստեղծուած են իրողութիւնները քնացնելու համար։ Այս պատճառով, եթէ Հայաստանը պէտք է սպասի քննութեան հետեւանքին, նա կարող է հանդարտ սրտով գործը դցել ապագայ դարուն"։

Քաղաքական աշխարհի համար բարոյական պարտք, խիղճ, օգնութիւն եւ այլն, շատ խորթ բառեր են։ Նա իր անելիքը, իր ամէն մի քայլը համակշռում է որոշ, չշափելի, եսական շահերով. առանց այդ շահի դուք նրանից օգնութիւն ընաւ մի սպասէք։

Մենք արդէն մի քանի անգամ առիթ ենք ունեցել ա-

գասը չէ, որ դրանք զբաղուում են նրա միջոցով, բայց 1 յուսթեան համար անհրաժեշտ պայմաններ են, որոնք հե-

սել եւ կրկնել, ստիպված ենք կրկնել եւ այս անգամ։ Ազատութիւնը ձեռք է բերուում արեան գնով եւ ոչ դիպլոմատիկական ճանապարհներով եւ զանազան խնդիր-աղերսագրերով։ Այս մեզ ցոյց է տալիս ամբողջ մարդկութեան պատմական անցեալը, այդ է մեզ սովորեցնում բոլոր ազգերի յեղափոխական պատմութիւնը։

Քաղաքակրթուած հասարակութեան եւ մամուլի բողոքները, նրանց արտայայտած համակրական ցոյցերը մեզ խրախուսում, ոյժ են տալիս։

Մենք կը մտցնենք յեղափոխական գաղափարը ժողովրդի բոլոր խաւերը, մենք կը կազմակերպենք նոր եւ նոր խմբեր ու համախմբուած, միացած, կը կուենք թշնամու դէմ երկրի իւրաքանչիւր մի կէտի վրայ աւելի եւ աւելի մեծ ոյժերով։

Եւ այսպէս յառաջ տանե՛նք ժողովրդի ազատութեան սուրբ գործը։

ԲՐԴԵՐԻ ԲԱՋԱԴՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Հասնանցի քրդերը Մանազկերտի մօտ գտնուող Ղասրիկ հայ գիւղացիներից մի քանիսին դուրս են քշում բոլորովին մերկ ու բոբիկ, տանում են մի քանի գեղեցիկ հարսներ ու աղջիկներ եւ ոչխարի պէս մորթում քահանային ու երկու երիտասարդների։

—Հասնանցի համիդիէ քրդերից 25 ձիաւոր մի գիշեր յարձակւում են Թէօդեվերան գիւղի բողոքական քահանայի տան վրայ։ Դուռը փակած է լինում։ 4 հոգի միասին ամենայն ուժով խփում են դուռը կոտրելու։ Այդ ժամանակ պատուհանը լուսամուտի ներսի կողմից սկսում է օգնութիւն կանչել. քրդերից մէկը հրացանի մի գնդակով դղրդում է թէ պատուհանը կնոջ եւ թէ նրա եղբօր գտնուած մի մեծի գաղթական կնոջ։ Այդ տեսնելով, պատուհանը որդին չի կարողանում համբերել եւ ըէվոլվերի մի հարուածով դղրդում է մի քիւրդ։ Ցունը պաշարող քիւրդերը տեսնելով իրենց ընկերի ընկնելը, խլոյն վերցնում են դիակը եւ փախչում. նրանց հետեւում են եւ նրանք, որոնք քչելիս են եղել արդէն գիւղի ոչխարները։ Այսպիսով քրդերը աւարի փոխանակ տանում են իրենց սպանուած ընկերոջ դիակը։

—Ամբողջ խնուսը անցեալ տարի ենթարկուած էր աւերումների։ Տարուած են Ղօզլու գիւղի բոլոր ոչխարները։ Ինկիքոյից տարել են 110 ոչխար եւ 12 ձի։ Ինկիքոյի եւ Ղօզլու գիւղերի արանքում գտնուում է մի փոքրիկ գիւղ 10 ընտանիքից բաղկացած, որ հիմնել է Ղօզլու գիւղացի Գրէն։ Հասնանցի ցեղից 18 ձիաւոր մի գիշեր յարձակւում են այդ Գրէյի տան վրայ, կողոպտում են տունը, լցնում են կանանց երկու մատղահաս աղջիկ հազիւ են կարողանում ազատել եւ փախչել Ղօզլու քահանային ու ռէսին օգնութեան կանչելու։ Անպէն հայ գիւղացին չի համարձակւում գնալ տէրութեան հրացաններով զինուած քրդերի վրայ։ Բայց այդ ժամանակ գիւղումն է լինում իւզբաշին իւր զինուորներով, որին եւ դիմում են օգնութիւն խնդրելով։ Իսկ իւզբաշին փոխանակ օգնելու, հայհոյում է, ասելով, թէ դեռ այդ ձեզ քիչ է, անհաւատ շնե՛ր։ Քահանան եւ ռէսը վիզները ծռած վերադառնում են տուն։

—Բազկիկ գիւղում Ջիպրանցի քրդերը մի գիշեր յարձակւում են Գրիգոր անունով մէկի խանութի վրայ, կողոպտում են եւ իրեն վիրաւորում։ Միւս օրը Գրիգորը գընում է Խնուս զայմազամին բողոքելու։ Զայմազամը նըրան բանտարկում է, յայտնելով՝ թէ նա սուտ է խօսում. ոչ խանութ է կողոպտած եւ ոչ քրդեր են յարձակուած, այլ նա Սասունումն է ստացել իր վէրքը։ Գրիգորը մի քանի օր բանտի մէջ է մնում, մինչեւ որ մի քանի քախկիկցի հայ եւ քիւրդ գալիս վկայում են, որ Գրիգորը յիրաւի չի գնացել Սասուն եւ վէրքն ստացել է խանութում։ Բայց զայմազամը ըստ իր սովորութեան առնում է 10 ոսկի եւ այնպէս բաց թողնում։

—Ախլաթի Սոխորդ գիւղը օր ցերեկով գալիս են 12 հասնանցի ձիաւորներ եւ իջնում իրրեւ հիւր ռէս Գրիգորի տանը, որ բաւական հարուստ մարդ է Ախլաթում։ Քրդերի նպատակն է լինում բարեկամութեամբ կողոպտել այս հարստի տունը։ Գրիգոր աղան հասկանալով իրեն գալիք վտանգը, դիմում է իր դրացի քաջ Մխիթարի օգնութեան։ Մխիթարի մի ակնարկով հաւաքւում են գիւղի քաջերը, 22 հոգի իրենց հին չէչխանաներով զինուած։ Մխիթարը, առնելով իր հետ 6 հոգի, մտնում է ներս, ուր քրդերը նստած ճաշելիս են լինում։ „Դուք, քրդեր, ասում է նա, եկել էք մեր գիւղը իբր հիւր. բարով էք եկել, մեր աչքի վրայ տեղ ունէք. կերէ՛ք, խմեցէ՛ք ու հեռացէ՛ք, Աստուած բարի ճանապարհ տայ։ Իսկ եթէ եկել էք վատ մտքով, տեսնո՞ւմ էք, ահա մենք պատրաստ ենք, 6 այստեղ, 16 էլ դուրսը։ Մոլորուած քրդերի թիւքէն ըներանին է մնում. ամօթահար եւ սարսափած վեր են կենում տեղերից եւ հեռանում։

Մեր ընկերներից ոմանք մեզ դիմում են, թէ ինչու չենք պատասխանում ընդհանրապէս յարձակումներին, մեղադրանքներին, մութ ակնարկութիւններին եւ այլն, որոնք ուղղուածեն Դաշնակցութեան դէմ։

Այս սոսկալի շրջանում մեր խիղճը թոյլ չի տալիս ըզբաղուել սահմանափակութիւնների հերքումներով, ուշադրութիւն դարձնել տղայական պոռոտախօսութիւնների վրայ։

Եթէ անցեալ անգամ էլ մենք պահանջեցինք «Հնչակից» ապացուցանել փաստերով իր լկտի մեղադրանքը, որովհետեւ դրանով ամբողջ մի կուսակցութեան պատիւն էր ցեխոտուում։

Այժմ մենք դիմում ենք «Հնչակին» եւ երկրորդ անգամ պահանջում նրանից, որ նա պարզ ասի իր ասելիքը, իր սպառնալիքները կատարի, որ հիմնուած, կրկնում ենք, փաստերի վրայ ապացուցանի, հաստատի, թէ «Դաշնակցութիւնը» նրա սեփական թղթակցութիւնները գողացել է։

Նուիրատուութիւնների ցուցակը.—

Աշդաշից 22 ր., Արմենակից 68 ր., Թել-ից 100 ր., Օդս-ից 209 ր., Բթ-ից 150 ր., Ելենենդ-ից 31 ր., Գնձ. №-ից 10 ր., Գնձ. գիմն-ից 60 ր. 40 կ., Գնձ. Բ. միջ. 60 ր., Գնձ-ից 180 ր., Արամից 72 ր., Գնձ-ից 400 ր., Զարդ. Գետ. գ-ից 60 ր. 20 կ. Արմենակից 100 ր., Աշդաշից 30 ր., Երեկոյթից 131 ր., Անկելանոցից 33 ր., Թերթից 35 ր., Կայծիկ-ից 76 ր.։

Ամերիկայի Լովէլ-Մաս. ք-ից Մ. Մ.-ից 1 դօլ. Ֆիլադէլֆիայից Ե. Բ.-ից 1 դօլ.

Հին հաշ-ից.—

Կ.-ին ք.-ից Համարձակների միջոցով՝ Հ.-ից 20 օսմ. ոսկի, Զ. Դ.-ից 5 ոսկ., Ն. քաղ. Խաչ. Ա. ձեռքով 5 ոսկ., Ա, Զ.-ից 1 ոսկ., Համարձ. Ա.-ի խմբ. 2 ոսկ.

Վրիպակ. Գեր. Վերիս. ք. Տ. Ա.-ից (№ 12) 30ր. փոխանակ պէտք է լինի 30 մարկ։ Տ. կօմիտ. 100 օսմ. լիր. (№ 14) ստացած է Աղէքսանդրիա ք.-ից Արծիւէն։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նուիրատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան